

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱԿԱԿՆԵՐԻ  
ՄԱՐՏԻԿԱՆ ՍԻՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ՍՎՈՐ ԳԻՏՈՒԹ. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ



9(47) "XIX" 4987

5-30 5 Երևան, 2.

Գետպատճեալութիւնը

Ա.Տ. Լոռի Արդիութեալ 1 ա.

9(47)16

5 - 30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ. ԷԼՉԻՐԵԿՑԱՆ  
ԱՅԼԻԳԱՅՈՒ է 1881 թ.

A 6743

ԳԵՆԵՐԱԼ-ԱԴՅՈՒՏԱՆՏ

Մ. Տ. ԼՈՐԻՄ-ՄԵԼԻՔՈՎ


4987


Ս Ա Խ Մ Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի Ա Կ Ա Դ Ե Մ Ի Ա Յ Ի Հ Ա Յ Կ Ա Ն Ֆ Ի Ա Մ  
Ե Ր Ե Վ Ա Ն

1942

Սերիա՝ Խմբագրությամբ ակադ. ՀՈՎԱՅԵՓ ՕՐԲԵԼՈՒ

Շապիկը՝ նկարիչ Մ. Ն. ՄՈԽԻ





Գեներալ Միքայել Տարիելի Լոռիս-  
Մելիքովը՝ մեկն էր անցյալ դարի երկրորդ  
կեսի այն ականավոր հայ զեներալներից,  
որոնք մեծ անուն վաստակեցին ոռւսական  
բանակում։ Նա ծնվել է 1825 թվականին՝  
Թիֆլիսում, ոովորել է Պետերբուրգում՝  
դվարդիական պոդպրապորչիների և հե-  
ծեղազորային յունկերների դպրոցում, որն  
ավարտելուց հետո նշանակվել է Գրոդնոյի  
դվարդիական հուսարական գնդի կորնետ։  
Բայց այդ գնդում նա երկար չծառայեց։  
Նրան քաշում էր հայրենիքը՝ Կովկասը,  
ուր և 1847 թվին փոխադրվեց Տառայու-  
թյան։ Այստեղ Լոռիս-Մելիքովն ակտիվ  
մասնակցություն ցույց տվեց կովկասյան  
ճակատի ռազմական դործողություններին՝  
1853—56 թ. պատերազմի ժամանակ։

Այս կամպանիայում նա խիզախ կամա-  
վորների ջոկատի հրամանատար էր. գոր-  
ծող բանակում նրանց անվանում էին «Լո-  
ռիս-Մելիքովի կամավորներ»։ Նա մաս-

նակցեց բոլոր մարտերին, որոնք տեղի ունեցան այդ պատերազմի ժամանակ կովկասյան ճակատում՝ Բայանդուրի, Բաշկաղիկիլլարի, Քյուրուկդարայի ճակատամարտերին և Կարսի գրոհին։ Պատերազմը վերջանալուց որոշ ժամանակ անց՝ նա ստացավ կավալերիայի գեներալի աստիճան։

1877 թվին Ռուսաստանի և Տաճկաստանի միջև պատերազմ ծագեց։ Լոռիս-Մելիքովը նշանակվեց կովկասյան ճակատում գործող կորպուսի հրամանատար։

Պատերազմը տեղի ուներ երկու ռազմաբեմում՝ Բալկանյան և Կովկասյան։ Վճռականը Բալկանյան ռազմաբեմն էր։ Լոռիս-Մելիքովը հասկանում էր այդ և պատերազմը վարելու իր պլանը կառուցում էր հաշվի առնելով հենց այդ հանգամանքը։ Բալկաններում գործող ռուսական բանակի վրա դրված խնդիրների հաջող կատարմանն օժանդակելու համար Լոռիս-Մելիքովը որոշեց արագորեն հարձակվել և մտնել հակառակորդի տերիտորիայի խորքը, որ կստիպեր թուրքերին կովկասյան ճակատում մեծ բանակ պահել և նույնիսկ որոշ ուժեր տեղափոխել Բալկաններից։

1877 թվի ապրիլի 12-ին, ուսղմական  
զործողություններն սկսվելու օրը, զոր-  
ծող բանակի գլխավոր ուժերը, որոնք  
կենտրոնացված էին Աղեքսանդրոպոլում,  
անցան սահմանը և դիմադրության չհան-  
դիպելով՝ ապրիլի 15-ին ճամբար գրին  
Պալդրվան, Քյուրուկ-դարա, Սաբաթան,  
Հաջի-Վալի և Գյուլվերան գյուղերի մոտ:

Թուրքական բանակի հրամանատար  
Մուխար փաշան լուրջ կերպով մտահոգ-  
ված էր, որ ոռուսական բանակը սահմանն  
անցել և արագորեն առաջ էր շարժվում:  
Դիտենալով, որ ոռուսները շատ չեն, նու  
չէր սպասում, թե նրանք հարձակման  
կանցնեն: Նա ինքն էր պատրաստվում  
ներխուժել մեր սահմանները, բայց հակա-  
ռակը դուրս եկավ— ոռուսները կանխեցին  
և դեռ ուղում էին վճռական մարտ տալ:  
Մուխթար փաշան հանդեց այն եզրակա-  
ցության, որ ոռուսական զորքերի քանա-  
կության մասին իր ունեցած տեղեկու-  
թյունները ճիշտ չեն և որ իրականում  
նրանք ավելի շատ են, քան ինքը ենթա-  
դրում էր, ուստի որոշեց ժամանակավո-  
րապես անցնել պաշտպանողական տակոի-  
կայի:

Այս տակտիկան ընտրելով՝ Մուխթար

փաշան իր բանակի մեծ մասը թողեց Կարսում՝ ամբոցը պաշտպանելու, իսկ մնացած մասի հետ նա բոնեց Սողանլուի բարձունքները, որպեսզի թույլ չտա ուստական բանակին դրավելու այն ճանապարհները, որոնք անցնում էին այդ լեռնաշղթայով և նրա բանակը կազում էին Փոքր Ասիայի ներքին գավառների հետ։ Այդ դերքը հարմար էր նաև նրանով, որ լավ ուազմադաշտ էր հանդիսանում հարձակողական գործողությունների համար։

Իր հրամանատարության տակ փոքրաթիվ զորք ունենալու պատճառով Լոռիս-Մելիքովը չէր կարող շարունակել հարձակումը, հետեւապես և զգալի չափով հեռանալ սահմանից։ Բացի դրանից, ուստական բանակի արշավի հանապարհին կանգնած էր Կարսի ահեղ ամբոցը, որն առկա ունեցած ուժերով գրավելը ոչ միայն ոխակի հետ էր կապված, այլև նույնիսկ չէր կարելի ամբողջովին պաշարել։ Ուստի նա որոշեց մինչև օժանդակ ուժեր ստանալն ուժեղացնել դիառղությունը Կարսում գտնվող թուրքական գորքերի նկատմամբ, որի համար և իր ուժերը գառավորեց Ենգի-քեյ, Կոլոնի-քեյ և Վիդին-քեյ դյուղերի միջև։ Ուժերի այդ դասավորու-

Ծյունը հնարավորություն էր տալիս պահապանել կոմունիկացիաները և հսկողության տակ պահել Կարսից գեղի Արդահան տանող բոլոր ճանապարհները, իսկ Արդահանի գրավումը Լոռիս-Մելիքովն առաջնահերթ խնդիր էր համարում :

Արդահան քաղաքը XVI դարում թուրքերը գրավել էին վրացիներից և սկզբում ամրացված կետ ու ապա ամրոց էին դարձրել : Նա վտնվում է Կուր գետի երկու ափերին՝ Բաթումի և Ախալցիայի, Կարսի և Էրզրումի ճանապարհների հանգույցում : Գրավել Արդահանը՝ կնշանակեր մեկուսացնել սազմաբեմի հյուսիսային մասում դործող և Բաթումի վրա հենվող թուրքական ուժերը Մուսթար փաշայի բանակից և հնարավորություն չտալ վերջինիս Արդահանով ներխուժել Անդրկովկաս, քանի որ Արդահանից դեսլի Թիֆլիս հարմար ճանապարհներ կային : Վերջապես, այդ ամրոցի գրավումը կապահովեր ոռւսական բանակի թիկունքը Բաթումի կողմից հնարավոր հարգածից՝ նրա առաջնապահցման դեղորում :

Պատերազմի հենց սկզբից գործող կորպուսի Ախալցիսայի ջոկատը, գեներալ Դե-

վելի հրամանատարությամբ, շարժվեց դեպի սահմանը, սակայն միայն այդ ջոկատի ուժերով գրավել Արդահանը հնարավոր չէր, ուստի Լոռիս-Մելիքովը ուժեղացրեց այն՝ դեներալ Գեյմանի հրամանատարությամբ զորք ուղարկելով Կարսի մոտից։ Միացյալ ուժերի հրամանատարությունը և Արդահանի գրավման բոլոր դործողությունների զեկավարությունը նա իր վրա վեցրեց։ Զորքերն արդեն լավ ճանաչում էին իրենց զեկավարին։ Պատերազմից քիչ առաջ Լոռիս-Մելիքովը եղել էր Ախալցխայի ջոկատում։ Նրա՝ այդ ջոկատում լինելու մասին ականատեսը պատմում է. «Ես հիշում եմ կորպուսի հրամանատարի առաջին գալուստն Ախալցխա։ Զորքերին առաջ նրա ուժեղ, սպարզ, զինվորականին համառկ խոսքը, որպես ուսպմական ճատի մի հրաշալի օրինակ, զինվորների և սպաների մեջ միանգամից անդրդիելի հավատ հաստատեց զեպի իրենց ապագա առաջնորդը . . .»։

Մայիսի 3-ին Լոռիս-Մելիքովն անձամբ հետախուզեց տեղանքը և որոշեց հրետանային նախապատրաստությունից հետո առաջին հերթին դրոհել իմիր-օղլի ամրությունը, որը կառուցված էր Փյու-

լավերդիի բարձունքների վրա և պաշտպանում էր քաղաքն արևելքից : Ամուս կանգնելով այդ բարձունքների վրա, արդեն համեմատաբար տվելի հեշտ կլիներ գրավել նաև մյուս ամրությունները, բայի Մանկլաս լեռան վրա կանզնեցրած Ռամազան-թափայից, որը համարյա անառիկ մի ամրություն էր :

Գրոհը նշանակված էր հաջորդ օրը :  
Վրա հասավ մայիսի 4-ի առավոտը :  
Երեսով էր, որ լավ եղանակ պետք է լինի : Լոռիս-Մելիքովն առավոտյան ժամը 5-ին մեկնեց գեպի Ալագյողի բարձունքները : Հավատացած լինելով, որ իր զորքերի բարոյական ողին բարձր է, և գիտենալով, որ նրանք բուռն ցանկություն ունեն ինչ էլ լինի գրավել ամրոցը, հետեւապես և համոզված լինելով, որ հաղթությունն ապահովված է, Լոռիս-Մելիքովը, իզուր արյունահեղությունից խուսափելու համար, առաջարկեց պարետին հանձնել ամրոցը : Ժամը 8-ին թուրքերը հրետանային կրակ բաց արին . դա սլարետի պատասխանն էր Լոռիս-Մելիքովի առաջարկին : Ճակատամարտն սկսվեց : Ռուս հրետանապորները շատ լավ աշխատեցին այդ օրը՝

կործանելով հակառակորդի ստրությունները և ոչնչացնելով նրա կենդանի ուժը:

Նույն օրը վաղ առավոտյան գեներալ Դեվելու իր զորքերն առաջ շարժեց դեպի Գյուլավերդի հյուսիս-արևելյան ստորոտները և սպասեց պայմանագրված աղղանշանին՝ իմիր-օղլի ամրությունը գրոհելու համար: Թնդանոթի պատահական դարկերը նա ընդունեց որպես ազդանշան և սկսեց գրոհը: Զորքերը, ողնորված, մարտի նետվեցին: Շուտով թուրքերն ստիպված եղան թողնելու Գյուլավերդի ստորոտը և ետ գնալ դեպի նոր դիրքեր: Այժմ արդեն ոռւսներին վիճակված էր հակառակորդի ուժեղ կրակի տակ մաղլցել զառիվեր լանջերով: Բայց այդ արգելքները նույնպես հաղթահարվեցին: Զինվորները համառությամբ բարձրանում էին լանջն իվեր և, վերջապես, գրավեցին թուրքական երրորդ խրամատը ևս: Մինչև լեռան գագաթը, որտեղ գտնվում էր վերջին ամրությունը, ընդամենը 600 քայլ էր մնացել, բայց քանի որ մարդիկ խիստ հոգնել էին, գեներալ Դեվելու դադարեցնելով հարձակումը, օգնական ուժեր խնդրեց Լոռիս-Մելիքովից: Այդ դեկույցը ստանալով՝ Լոռիս-Մելիքովը, որը հետեւում էր մարտի

ընթացքին Բուրդոսան լեռան վրայից , որ-  
տեղ , գրոհի մասնակիցների ասելով ,  
կարկափ պես արկեր էին տեղում , մեկնեց  
Դեվելի մոտ՝ հբամայելով գեներալ Գեյ-  
մանին իր հերթին նույնպես գրոհել էմիր-  
օղլին հարավ-արևելյան կողմից : Բայց  
գեներալ Դեվելի զորքերը չսպասեցին պայ-  
մանավորված ժամին , որպեսզի գեներալ  
Գեյմանի զորքերի հետ համատեղ գրոհեն ,  
և քիչ հանդստանալուց հետո նորից նետ-  
վեցին դեպի գագաթը ու գրավեցին ամ-  
րությունը : Այդ օրն առանձնապես աչքի  
ընկալ 156-րդ Ելիսավետոպոլսկի հետևակ  
դունդը , որը զործում էր գնդապետ Ամի-  
րաջիբովի հմուտ հրամանատարության  
տակ : Թուրքական զորքերն ուժեղ դիմա-  
դրություն ցույց տվին : Էմիր-օղլի ամրու-  
թյան հրամանատար Կաֆտան Մահմեդ-  
բեյը շրջում էր բարձունքները և սպեսում  
իր մարդկանց , բայց պահել իր դիրքերը  
նրան այնուամենայնիվ չհաջողվեց : Ցե-  
րեկվա ժամը 3-ին գրավված ամրությունը  
եկալ Լուիս-Մելիքովը , որին զորքերը  
հանդիպեցին խանդավառությամբ : Նա  
չորհամավորեց նրանց հաղթանակը : Ի պա-  
տասխան նրա խոսքերի՝ «Դուք առաջինն  
ուրախացրիք Թուրքաստանին» , հնչեց եր-

կարատե «ուռա»-ն։ Իրոք, դա ոսւս զ՞րբ-  
քերի առաջին խոշոր հաղթանակն էր  
1877—78 թ. թ. պատերազմում։

Գյուլավերդիի բարձունքները դրամիե-  
լուց հետո որոշվեց անմիջապես գրոհել  
Արդահանը։ Մայիսի 5-ին Լոռիս-Մելիքովը  
նորից առաջարկեց Արդահանի պարետին՝  
հանձնել քաղաքը։ Պարետը համաձայնում  
էր, բայց պայմանով, որ հնարավորու-  
թյուն տրվի հանել քաղաքի կայազորը  
դենքը ձեռքին, հանել բոլոր հրանոթները,  
ինչպես նաև ուազմական ու պարենամթերքի  
պաշարները։ Լոռիս-Մելիքովը մերժեց այդ  
պայմանները և սկսեց ոմբակոծել քաղա-  
քը։ Թուրքերն սկզբում պատասխանեցին  
հրետանային կրակով, բայց մի երկու ժամ  
անց նրանք դադարեցրին կը ակը։ Երեկո-  
յան դեմ սկսեցին տեղեկություններ ստաց-  
վել, որ թուրքական ամրություններում ի-  
րարանցում և շփոթություն է նկատ-  
վում։ Քաղաքը դրավել սկսեցին երեկոյան  
ժամը 6-ին։ Ուստական զորքերը գրոհի էին  
դնում երաժշտությամբ և ծածանվող գրո-  
շակներով։ Նրանց հետեւից դնում էր ինքը՝  
Լոռիս-Մելիքովը։

Երեկոյան ժամը 8-ին Արդահանն ըն-

Կավ : Լոռիս-Մելիքովը մտավ քաղաք .  
գրքերը նրան դիմավորեցին ցնծությամբ :

Արդահանի գրավման լուրն արագորեն  
տարածվեց ամբողջ Անդրկովկասում : Բը-  
նակչությունը մեծ ցնծության մեջ էր : Մայ-  
րաքաղաքի ոռուսական թերթերից մեկի թղթ-  
թակիցը, որ ուազմաբեմ էր մեկնում և այդ  
ժամանակ անցնում էր Թիֆլիսով, գրում  
է . Հեռ Թիֆլիսին չհասած՝ ես իմացա Ար-  
դահանի գրավման ուրախալի լուրը : Այդ  
պատճառով կովկասի մայրաքաղաքը ցըն-  
ծության մեջ էր : Նախորդ օրը գոհունա-  
կության մաղթանք էին կատարել և հրա-  
նոթների կրակով ողջունել այդ հաղթու-  
թյունը : Ամենուրեք խոսում էին Արդահանի  
մասին, հաջող դրոհի մասին . . . » :

Արդահանը գրավելու համար Լոռիս-  
Մելիքովը պարզեատրվեց Գեորգեսկի Խ  
աստիճանի խաչով :

Ոռուսական դորքերի քչության պատ-  
ճառով Լոռիս-Մելիքովը հնարավորություն  
չուներ զարգացնելու իր հաջողությունը և  
չէր կարող միաժամանակյա գործողու-  
թյուններ վարել թե՛ կարսի դեմ և թե՛  
Մուհիթար փաշայի բանակի դեմ, որը  
դնալով ուժեղանում էր Փոքր Ասիայից ե-  
կող Դորքերով :

Ստեղծված պայմաններում Հոռիս-Մելիքովն ամենից ավելի ճիշտ էր համարում մինչև օժանդակ զորք ստանալը՝ իր ուժեւը կենտրոնացնել Կարսի և Սողանլուի միջև ու այդպիսով կարել Կարսը Մուսթար փաշայի բանակից։ Բայց հանդամանքներն այլ կերպ դասավորվեցին, և նա ստիպված եղավ դուրս գալ Մուսթար փաշայի բանակի դեմ։ Հունիսին Երևանին ջոկատն ընկավ դժվարին դրության մեջ։ Հակառակորդը պաշարեց Բայազետը և խոչոր ուժեր կենտրոնացրեց գեներալ Տեր-Ղուկասովի դեմ։ Պետք էր նրան օգնություն ցույց տալ։ Այդ կապակցությամբ ոռւսական զորքերի մի մասը, զեներալ Գեյմանի հրամանատարությամբ, չարժվեց դեպի Սողանլուի՝ Մուսթար փաշայի բանակի դեմ, իսկ մյուս մասը մնաց Կարսի տակ։

Ոռւսական զորքերի երեալը Մելյաձորի բարձունքներում կանգնեցրեց թուրքական բանակի գործողությունները Երևանին ջոկատի դեմ, որը նահանջեց Իգդիրի ուղղությամբ, իսկ այնտեղից օգնության դնաց Բայազետում պաշարված ոռւսական փոքրաթիվ կայազորին, որը հերոսարար

սլաշտողանվում էր հակառակորդի ջատ ան-  
դամ գերազանց ուժերից :

Սողանլուխի վրա շարժվելու մի այլ  
ետևանքն էր հունիսի 13-ի մարտը Զիվի-  
ն, մոտ, որտեղ ուժեղ ամրացված դիրքե-  
րամ կանգնած էր Իսմայիլ փաշան իր  
կորպուսով : Խուսական զորքերին չհաջող-  
վոց գրավել Զիվինը : Այդ անհաջողությու-  
նի պետք է բացատրել գլխավորակես նը-  
րանով, որ ոռւսական զորքերը փռքբաթիվ  
էին, այլև նրանով, որ բավարար ինֆոր-  
մացիա չկար Զիվինի ամրությունների ու  
այնտեղ տանող ճանապարհների մասին :  
Կռանց այն էլ դժվարամատչելի Զիվինն  
ուժեղացված էր նոր ամրություններով,  
որոնց մեծ մասն անհայտ էր մնում : Պար-  
ևլով անհաջողության պատճառները և  
հույս չունենալով, որ շտապ օկնություն  
կրտանա, Լոռիս-Մելիքովը որոշեց նահան-  
չել դեպի Կարս :

Թուրքական զորքերը չհետապնդեցին  
ոռւսական նահանջող ջոկատին : Զիվինի  
մոտ եղած անհաջողությունն սորատեգիա-  
կան տեսակետից չազդեց կամպանիայի  
լուղանուր ընթացքի վրա :

Խուսական բանակի համար Զիվինի  
մոտ տեղի ունեցած անհաջող ճակատա-

մարտից հետո Մուխթար փաշան մտադըր-  
վեց հարձակման անցնել և ներխուժել  
Անդրկովկաս։ Խամայիլ փաշայի և Թայի  
փաշայի զորքերը պետք է աջակցեն թուր-  
քական բանակի ուժերին։ Այսպիսով՝ նո-  
խաճեռությունն անցնում էր թուրքերի։

Մուխթար փաշայի պլանը լոռիս-Ըն-  
լիքովի համար անսպասելի չէր։ Նա կսն-  
խատեսում էր այն, ինքն էլ ցանկանում էր  
հանդիպում ունենալ թուրքական բանսկի  
հետ և միայն սպասում էր օժանդակ ուժե-  
րի գալուն, որոնք սկսեցին հետզհետե ո-  
տենալ սկզբում հանձին 40-րդ հետևակ  
գիլիզիայի, իսկ քիչ ավելի ուշ՝ 1-ին  
գրենադերյան գիլիզիայի։ Բայց Լոռի-  
Մելիքովը առժամանակ հարկադրված էր  
նահանջել՝ դադարեցնելով նաև Կարսի  
պաշարումը։

Կարսի պաշարումը դադարեցնելը շուր-  
բարդ և դժվարին զործ էր։ Պետք էր զոր-  
քը հեռացնել, հրանոթները, ուղղմա-  
մթերքները և հանդերձանքը տանել այն-  
պես, որ հակառակորդը ոչինչ չնկատի և  
չհետապնդի ուռսական նահանջող զորքե-  
րին։ Բավական է ասել, որ ուռսական  
զորքերին շատ մոտ գտնվում էր Մուխթար  
փաշայի երեսուն հազարանոց կորպուսը,

որը թևային դիրք ուներ և անդագար  
սպառնում էր կոմունիկացիաներին, իսկ  
ճակատից ոռւսական զորքերի դեմ զտնը-  
վում էր Կարսի բազմամարդ, արտելքի  
պատրաստ կայագորը։ Լոռիս-Մելիքովը  
այդ զործողությունը կատարեց վայըուն  
կերպով։ Ռուսական զորքերը նոր դիրքերը  
քաշվեցին լիակատար կարգով։ Կարսի կա-  
յագորի զգոնությունը թուլացնելու համար  
մինչև վերջին բոպեն չէր դադարում Կար-  
սի ամբությունների ամբակոծումը։

A 6243  
4982

Ռուսական բանակը Կարսի մոտից հե-  
ռանալուց հետո Մուխթար վաշան առաջ  
իւացաց և տեղափորվեց Կարսի սարահարթի  
բարձունքներից մեկի՝ Ալաջա լեռան  
վրա։ Թուրքական բանակն աջ թեռվ  
հենվում էր Ալաջա լեռանը, ձախով՝ Կար-  
սին, իսկ կենտրոնով՝ Բուլանըին և Վի-  
դին-քեյին։ Դիրքերը խիստ ամբացված  
էին, իսկ մատուցյները գտնվում էին խա-  
չածե կրակի տակ։ Լոռիս-Մելիքովը ոռո-  
սական բանակը քաշեց Զայիմից և դիրք  
բռնեց Քյուրուկ-դարայի ու Բաշկադիկլա-  
րի տակ։

Նոր դիրքեր անցնելուց հետո ոռոսա-  
կան բանակի համար սկսվեց սպասողական  
մի շրջան, որը տևեց մոտավորա-

պես երեք ամիս։ Բայց ուժերի քչությամբ պայմանավորված այդ հարկադրական մաներումը չսասանեց բանակի բարձրութին, նրա պատրաստակամությունը՝ արժանի հակահարված տալու հակառակորդին, եթե նա փորձեր ներխուժել կովկասի սահմանները։

Այժմ Մուխթար փաշան այլևս հիմք չուներ հետաձգելու հարձակումը Արփաչայի մոտ կանգնած ոռուսական բանակի դեմ։ Նա մտադիր էր հեծելազորային արշավով գրավել Ջաջուռի լեռները, որով ոռուսական զորքերը կղներ շատ դժվարին, եթե չասենք անելանելի, դրության մեջ, քանի որ այդ լեռներով էր անցնում այն ճանապարհը, որով ոռուսական բանակն ստանում էր ամեն անհրաժեշտ բան։ Իր հեծելազորի այդ խնդիրը հեշտացնելու համար նա փորձեց Անիի ավերակների մոտ ցուցական դործողություններ կատարելով շեղել ոռուսական զորքերի ուշադրությունը և օգտվելով դրանից, բոլոր ուժերով ուղղվել դեպի Արփաչայի գետանցքները և ներխուժել մեր սահմանը։ Բայց թուրքական հրամանատարության այդ պլանը հաղություն չունեցավ։

Այդ դժվարին շրջանում Լոռիս-Մելի-

քովն ստիպված եղավ իր դլխավոր ուժեց-  
րից մի անգամ ևս օժանդակություն ու-  
ղարկել Տեր-Ղուկասովի ջոկատն ուժե-  
շացնելու համար, որը մարտական գործո-  
ղություններ էր վարում իսմայիլ փաշայի  
զորքերի դեմ, որոնք քիչ էր մնացել անց-  
նեին մեր սահմանը :

Մեր դլխավոր ուժերի թուլացման  
լուրն առնելով՝ Մուխթար փաշան անհա-  
պաղ օգովեց ստեղծված դրությունից և  
հարձակման անցավ։ Նրան հաջողվեց  
հանկարծակի հարվածով դրավել Կըզըլ-  
թափա բարձունքը, որ կարեոր ստրատե-  
գիական նշանակություն ունեցող մի կետ  
էր, ամբանալ այնուեղ և հրետանու կրակի  
տակ առնել ոռւսական զորքերի՝ Բաշկա-  
լըկլարի ճամբարը։ Որուսական զորքերի  
գիրքերի վրա թուրքերի կատարած մյուս  
զրոհները հետ էին մղվել։ Դրանից հետո  
թուրքական զորքերը տեղավորվեցին Հաջի-  
վալիի և Ինախթափասիի միջև, ձախ թեով  
հարելով Մեծ և Փոքր Յաղնի լեռներին,  
իսկ աջ թեով՝ Ինախին։ Որուսական ու-  
ժերն ամբացան Քյուրուկ-դարա--Օղուզ-  
լի—Ռէժթափա գծի վրա։

Երբ գործող կորպուսն օժանդակ ու-  
ժերն ստացավ, որոշվեց հակահարձակման

անցնել Մուխթար փաշայի զորքերի դեմ։  
Սեպտեմբերի 20-22-ին ճակատամարտ տեղի ունեցավ ռուսական և թուրքական բանակների միջև։ Ռուսական զորքերը գրոհեցին թուրքերի աջ թեր՝ Մեծ և Փոքր Յաղնի լեռները։ Երկու ժամ տևող տաքմարտից հետո, Մեծ Յաղնի լեռը, չնայած նրա պաշտպանների համառ դիմադրությանը, գրավվեց։ Իսկ Փոքր Յաղնի լեռը վերցնել չհաջողվեց, որովհետեւ նա շատ ուժեղ էր ամրացված և, բացի գրանից, գրոհը որոշ չափով խառնաշվոթ դուրս եկավ։ Ճակատամարտն ամբողջ դժով համառ բնույթ ուներ և շատ տեղերում ձեռնամարտի էր փոխավում։ Ռուսական զորքերը զիշերեցին գրավված դիրքերում, բայց խիստ տառապում էին ծարավից, որովհետեւ այդ լեռների մոտ գտնվող վայրերում ջուր չկար։

Լույս 22-ի գիշերը Մեծ և Փոքր Յաղնի լեռների մոտ գտնվող զորքերը ջրի պակասության պատճառով նահանջեցին։ 22-ին թուրքական զորքերը փորձեցին հարձակման անցնել, բայց նրանց գրոհները նորից հետ մղվեցին։ Այդ մարտերի ժամանակ համարձակ մանյովր կատարեց գեներալ Բեհրուտ Մարտիրոսի Շելկովնիկովը։ Ար-

փա-չայն անցնելով, դիշերը շափազանց  
դժվարին ճանապարհ կտրելուց հետո, ոեպ-  
տեմբերի 21-ին նա իր գորքերի հետ բարձ-  
րացավ Ալաջայի լանջերը և սկսեց թիկունքից  
սպառնալ թուրքական բանակին։ Բայց նա  
օղնություն չստացավ և չկարողացավ  
զարգացնել ձեռք բերած փայլուն հաջո-  
ղությունը։ Շելկովնիկովը հարկադրված  
եղավ նահանջել դժվարին պայմաններում՝  
հետ մղելով կրնկակոխ հետեւղ հակառա-  
կորդին։

Այդ մարտերի ժամանակ Լոռիս-Մե-  
լիքովը ցանկանալով անձամբ հետեւ լ  
դործի ընթացքին Մեծ Յաղնիի մոտ, այն-  
տեղ մեկնեց գեներալ Օքրուչեի հետ։  
Ճանապարհին այդ խումբը ենթարկվեց  
թուրքական հրետանու կրակին։ Արկերից  
մեկն ընկալ Լոռիս-Մելիքովի ձիու հենց  
առաջը, ավագ թափեց հրամանատարի  
վրա և կոնտուղիա ողատճառեց նրա կող-  
քով կնացող հանձնատարին։

Ալաջայի տակ սեպտեմբերի 20-22-ին  
վարած մարտերի հետեանքն այն եղավ,  
որ թուրքական զորքերը դրավեցին իրենց  
նախկին դիրքերը Ալաջա լեռների կատա-  
րին, իսկ ոռւսական բանակը տեղավորվեց  
Կարսի-թափա-Կարայալ — Ուչ-թափա

գծի վրա : Այսպիսով՝ այդ մարտերը հաջո-  
ղությամբ չպահպակվեցին կողմերից և ոչ  
մեկի համար : Այնուամենայնիվ՝ թուրքա-  
կան բանակի գրությունը ծանրացավ, ո-  
րովհետեւ վրա հասնող ցրտերի պատճառով  
նա երկար չէր կարող մնալ Ալաջայի բար-  
ձունքների վրա : Լոռիս-Մելիքովը ճիշտ եղ-  
րակացրեց, որ Մուխթար փաշան կնահան-  
ջի Սողանլուխից է՛լ այն կողմը, որպէսզի  
այնտեղ անցկացնի ձմեռը, կարգի բերի իր  
բզկտված բանակը և ուժեղացնի՝ իրեն  
միացնելով Իսմայիլ փաշայի գորքերը : Եվ  
իրոք, սեպտեմբերի 26-ից թուրքական  
գլխավոր հրամանատարն սկսեց զգուշու-  
թյամբ նահանջել : Բայց նա չկարողացավ  
Ալաջայի բարձունքներից նահանջել այն-  
պես, ինչպես Լոռիս-Մելիքովին հաջողվեց  
ետ քաշվել Կարսի մոտից : Դա չափաշանց  
բարեւ գործ էր, և թուրքական զորքերի  
շարժումը չէր կարող աննկատելի մնալ :  
Դա մի նպաստավոր մոմենտ էր թուրքա-  
կան բանակին վճռական հարգած հասցնե-  
լու համար : Այդ պատերազմի պատճու-  
թյան մեջ Ալաջայի ճակատամարտ անվան  
տակ հայտնի այդ մարտի պլանն առա-  
ջարկվել է գեներալ Օբրուչեկի կողմից և  
հավանություն է ստացել Լոռիս-Մելիքովի

կողմից, որը և դեկավարում էր ամբողջ  
օպերացիան։ Պլանը նախատեսում էր շըր-  
ջանցել թուրքական բանակը Թիկունքից և  
հետո արդեն գրոհել թուրքական զիրքերը  
Ալաջայի բարձունքների վրա։ Շրջանցող  
զորասյան հրամանատարն էր գեներալ  
Լազարել, որը հաջողությամբ ավարտեց  
այդ օպերացիան։ Նոյեմբերի 2-ին նա  
դրավեց Օրլովի բարձունքները՝ ետ շպըր-  
տելով թուրքական զորքերը զեպի Կարս  
և Վիզին-քեյ։ Այնուհետեւ, հաջորդ օրը  
նշանակվեց Ալաջայի բարձունքների գրո-  
հը։ Հրետանային նախապատրաստությու-  
նից հետո մեր զորքերը գրոհով վերցրին  
Ալիար լեռը և դրանով թուրքական դիր-  
քերը կարայալի մոտ ճեղքեցին երկու  
մասի։ Թուրքական զորքերի մի մասը  
փորձում էր զեպի Կարս գնալ, բայց թե-  
վից հանդիպելով գեներալ Լազարելի զորքե-  
րին և հետապնդվելով գեներալ Դեյմանի  
զորքերի կողմից, մինչև երեկոյան ժամը  
5-ը ջարդվեց և ցրվեց, իսկ մյուս մասը՝  
թվով երեք զիվիզիա՝ հետ չպրտվեց Ալա-  
ջայի զիրքերից, չըջապատվեց և երեկոյան  
ժամը 8-ին մոտ անձնատուր եղավ։  
Մուխիթար կաշայի անատոլիական բանակը  
դադարեց զոյություն ունենալուց։ Այդ

մարտերում նաև թուրք զինվորը կովում  
էր իրեն հատուկ համառությամբ և քա-  
ջությամբ, սակայն ուստական հրամանա-  
տարությունն ավելի բարձր գտնվեց թուր-  
քականից: Ալաջայի օպերացիան բարձր  
գնահատական ստացավ օտարերկրյա ուղ-  
մական շրջաններում: Ալաջայի բարձունք-  
ներում կատարած գործի համար Լոռիս-  
Մելիքովը պարզաբարվեց Գեորգեսկի Ա  
աստիճանի խաչով: Այն ժամանակ, ամբողջ  
ուստական բանակում միայն հինգ զեներալ  
ունեին այդ փարձր շքանշանը:

Այդ հաղթության անմիջական հետե-  
վանքն այն եղավ, որ ուստական զորքերը  
շարժվեցին դեպի երզում: Ինքը՝ Մուխ-  
թար փաշան շտապ Կարս դնաց, քայց  
չմնաց այնտեղ և մի քանի գումարտակով  
ուղղվեց դեպի Սողնալուխ, ուր Մուխթար  
փաշայի պարտությունից հետո իր զորքե-  
րով շտապում էր նաև Իսմայիլ փաշան,  
որին այժմ Տեղ-Ղուկասովն էր հետապրա-  
դում: Լոռիս-Մելիքովը ցանկանում էր  
կանխել թուրքական երկու ջոկատների  
միանալը և ջարդել նրանց առանձին-ա-  
ռանձին, որի համար և հատուկ ջոկատ  
առանձնացրեց գեներալ Գեյրմանի հրամա-  
նատարությամբ: Սակայն զեներալ Գեյ-

մանը չկարողացավ իրագործել հանձնա-  
րաբված խնդիրը՝ Քյոփիրի-քեյում Իսմայիլ  
փաշան միացավ Մուխթար փաշային։  
Թուրքական զորքերը նահանջեցին դեպի  
Դևերոյին, որը լավ ամրացված դիրք էր  
և էրզրումի նախադուռը։ Գեներալ Գեյ-  
մանը, որն իր և Տեր-Ղուկասովի ջոկատ-  
ների միանալուց հետո այդ ուժերի դլուն  
էր անցել, որոշեց բաց կռվով վերցնել  
Դևերոյինը, իսկ հետո նաև էրզրումը։  
Դաժան ժարուից հետո Դևերոյինը դրավ-  
վեց, բայց էրզրումի ամրությունների  
դրուչը հաջողություն չունեցավ։ Դիմեցին  
քաղաքի օղակմանը, որը շատ դժվարին  
դորձ էր, քանի որ այն կատարում էին  
տարվա ամենադաժան եղանակին։ Դրա  
հետ միասին, Սովանլուխի լեռնաշղթան  
անցած և իբենց մատակարարման բազայից  
կտրված ոռւսական զորքերը դրությունը  
չափաղանց ծանրացավ։ Գործին որոշ չա-  
փով օգնեց գեներալ Շելկովնիկովի եռան-  
դուն դործողությունը։ Նա շտագ միջոցա-  
սումների դիմեց զորքերին մատակարե-  
րու այն սմենը, ինչ անհրաժեշտ էր։

Դևերոյինը վերցնելուց հետո, Կարսը  
մեկուսացվեց մնացած Թյուրքիայից, այն-  
պես որ ամրոցի պաշտպանները ոչ մի տե-

զից օգնություն ստանալ չէին կարող :  
Գործող կորպուսի ուժերից կազմակերպ-  
վեց մի առանձին ջոկատ, այսովեռ կոչված  
Կարսի ջոկատը, որի հրամանատարու-  
թյունը հանձնարարվեց դեներալ Լազարեին :  
Լոռիս-Մելիքովի կարգադրությամբ ջո-  
կատն անցավ ամրոցի լիովին և խիստ օ-  
ղակմանը : Հրետանին սկսեց սիստեմատիկ  
կերպով ոմբակոծել ամրությունները :  
Այնուամենայնիվ որոշվեց ամրոցը վերց-  
նել ոչ թե պաշարումով, այլ դրոհով : Այդ  
տեղերի համար բնորոշ դաժան ձմեռվա-  
պայմաններում պաշարող բանակի դրու-  
թյունը ծանր կլիներ : Ինչ վերաբերում է  
ոռուսական զորքերի ռազմական ոգուն, ա-  
պա այն ավելի լավ լինել չէր կարող :  
Կարսի ամրությունները համարվում  
էին անառիկ : Քաղաքը շրջապատված էր  
ահավոր ամրություններով, որոնք շարու-  
նակ կատարելագործվում էին, սպառազի-  
նությունը լավն էր . շատ ամրությունների  
պատվարները հաստացրել էին, փոսերը  
խորացրել, ամեն տեղ գայլափոսեր էին  
փորել և տեղ-տեղ էլ տկաններ սարքել :  
Ամրոցի կայազորը քաղաքի աշխարհակորի  
հետ միանին հասնում էր մինչև քսան հա-  
զար մարդու :

Հաշվի առնելով 1855 թվի անհաջող  
դրուչը Կարսի վրա՝ որոշէեց այս անգամ  
նախ գրավել հարթավայրի ամրություննե-  
րը, որոնք գտնվում են Ղարսաշայի աջ ա-  
փին՝ Կանլի, Խաֆիո և Սուվարի, և ոչ  
թե այնպիսի ամրություններ, ինչպես Կա-  
րագաղը, Շորազի բարձունքները կամ  
թոխմասը։ Թեև նրանք իրենց հզորու-  
թյամբ հետ չէին մնում վերջիններից, սա-  
կայն նրանց գրավումն այն առավելու-  
թյունն ուներ, որ դրանով իսկ մնացած  
ամրությունները կտրվում էին իրարից և  
մեկուսացվում։

Հակառակորդին հանկարծակիե բերե-  
լու և մեծ կորուստներից խուսափելու հա-  
մար՝ գրուչը լուսին գիշեր էր նշանակված։  
Նոյեմբերի հենց առաջին գիշերները չառ  
հարժար էին այդ նպատակի համար։ 1855  
թվի գրուի փորձից ելնելով՝ արդելված  
էր ծխել, բարձրաձայն խոսել և իրենց  
հետ չներ վերցնել։ Յանկացրդների խըմ-  
բերը նախապես ուժեղացրած կերպով հե-  
տախուզում էին ամրությունները, որպեսզի  
պարզեն նրանց պաշտպանողների թիվը և  
ծանոթանան գեղի այդ ամրությունները  
տանող ճանապարհներին։

Սկզբում դրուչը նշանակված էր հոյեմ-

բերի 1-ի լույս 2-ի դիշերը : Բայց նոյեմ-  
բերի 1-ի առավետից անձրեւ տեղաց , ապա  
ձյուն եկավ , որն արագ կերպով հալվեց :  
Ստիպված եղան գրոհը հետաձգել :

Նոյեմբերի 4-ին եղանակը լավացավ :  
Գրոհը նշանակվեց նոյեմբերի 5-ի լույս  
6-ի դիշերը : Գործողությունները զեկա-  
վարում էր Լոռիս-Մելիքովը :

Գրոհից առաջ Լոռիս-Մելիքովը առա-  
ջարկեց ամրոցի պարետին՝ հանձնել այն  
առանց արյունահեղություն , բայց Կարսի  
պարետ Հուսեին-Խամիթ փաշան մերժեց  
այդ առաջարկը :

Գրոհի օրը , երեկոյան ժամը 7½-ին ,  
վ . Կարաջուրսան գյուղը եկավ Լոռիս-  
Մելիքովն իր շտաբով : Նա կանգ առավ ոչ  
թե զյուղում , այլ մի քիչ ավելի առաջ՝  
կանլի ամրությունից մեկ և կես կիլոմետր  
հեռավորության վրա : Գրոհի համար  
նշանակված զորքերին այցելելուց հետո  
նա հրամայեց սկսել գրոհը : Զորքերի մեջ  
լուռթյուն տիրեց , և նրանք լիակատար  
կարգով ու անաղմուկ առաջ շարժվեցին :  
«Զորասյուները շարժվում էին լիակատար  
կարգով , գրում է գրոհի մասնակիցնե-  
րից մեկն իր հիշողություններում , — ո՛չ  
աղմուկ , ո՛չ խոսակցություն , ո՛չ սովորա-

կան ողջույններ պետերին, բայց բոլորն էլ  
հասկանում էին, թե ի՞նչ պետք է անել:  
Սպաները կես ժամում բացատրեցին, թե  
ով ո՞ւր պետք է դնա: Դիսպոզիցիան պարզ  
էր ու որոշ, նպատակները դրված էին  
ձգրիտ կերպով:

«Գլխավոր գրոհը նշանակված էր հա-  
րավ-արևելքից, հարթավայրի ամրու-  
թյունների՝ Խափիսի, Կանլիի և Սուվարիի  
դեմ; Մնացած բոլոր կետերում հրամայ-  
ված էր ցուցական գործողություններ կա-  
տարել: Հանկարծակիի բերելն ընդունվում  
էր որպես հաջողության դիմավոր պայ-  
ման...»

«...Ուղիղ ժամը 8-ին դորքերը չարժ-  
վեցին խիտ, պահեստայինն ոյուներով:  
Առջելից՝ ուղեցույցների հետ դնում էին  
ցանկացորդների շլթանները: Պատկերը վե-  
հասքանչ էր: Ահեղ, հզոր ուժը չարժվեց  
հաղթելով կամ մեռնելու վճռականու-  
թյամբ: Անմահ գրոհի մասնակիցներն ա-  
սում էին, թե չարժվելուց առաջ դեներալ  
Լազարել դիմեց զինվորներին կարճ, բայց  
ազդու ճառով, որի խմաստը համարյա-  
բառացիորեն այս էր. «Մենք պետք է ու-  
ղիղ գնանք, եռ ձեզ հետ կլինեմ, նոհանչ  
չկա»: Այս խոռոքերով ասված էր ամեն

ինչ։ Զինվորները ճանաչում էին իրենց  
պետին, վստահ գնում էին նրա հետ, և  
իհարկե, նահանջի մասին մտածել չէին  
կարող»։

Եթե նոյեմբերի 1-ին տեղի չունեցած  
դրոհի մասին թուրքերը ժամանակին տե-  
ղեկություն էին ստացել և մարտական  
պատրաստությամբ սպասում էին ռուսու-  
կան զորքերի հարձակմանը, ապա այս  
անդամ գրոհը նրանց համար անսպասելի  
էր։ Միայն եքեկոյան մոտավորապես ժա-  
մը 9-ին լսվեցին թուրքական դիրքերի ա-  
ռաջին զարկերը։

Առաջին «ուռա»-ն հնչեց Սուվարիի  
կողմում, չուտով այն ավելի մեծ ուժով  
կրկնվեց Կանլիի և Խաֆիսի մոտ։ Ակսվեց  
կարսի գրոհը, և նոյեմբերի 6-ի առա-  
վոտյան քաղաքն արդեն գտնվում էր ռու-  
սական քաջարի զորքերի ձեռքում, որոնց  
աննման քաջության, տոկունության և  
վճռականության առաջ չկարողացան գի-  
մանալ ոչ հզոր ամրությունները և ոչ էլ  
ամրոցի կայուն պաշտպանները։

Կարսի անկումից որոշ ժամանակ հե-  
տո տեղի ունեցավ զինադադար, որի պայ-  
մանների համաձայն՝ ռուսական զորքերը

ժամանակավորապես գրավեցին էրզբիտմբ,  
այնուհետև հաշտություն կնքվեց :

Լոռիս-Մելիքովը թողեց գործող բա-  
նակը : Այդ առթիվ տված իր հրամանի մեջ  
փոխարքան նշել է նրա մատուցած ծառա-  
յությունները : Հրամանում ասվում է, «ր  
Լոռիս-Մելիքովի անունը «ընդմիշտ կապ-  
ված կմնա անցյալ կամպանիայի ժամանակ  
գործող կորպուսի զորքերի բոլոր քաջարի  
սիրագործությունների հետ : Քիչ փայլուն  
էջեր չե ավելացրել նա այն զորքերի փա-  
ռապանծ տարեգրությանը, որոնք վստահ-  
ված էին նրան, որոնց հետ նա տառնութ  
ամիս շարունակ բաժանել է նրանց վի-  
ճակված հերոսական աշխատանքները և  
ծանր դրկանքները : Արդահանի առումը,  
կոփվը Ալաջայի բարձունքներում, Դե-  
բոյինի ճակատամարտը և պատմության  
մեջ նմանը չունեցող կարսի գրոհը միշտ  
էլ կհամարվեն ուստական բանակի հպար-  
տաւթյունը» :

Армянский филиал Академии наук СССР

Боевые подвиги сынов Армении

А. ЭЛЬЧИБЕКЯН

Генерал-ад'ютант

М. Т. ЛОРИС-МЕЛИКОВ

(На армянском яз.)

Изд. Армфан

Ереван, 1942

ՎԵ 0134, պատվեր 855, տիրած 4000  
1,5 տու. մամուլ, մամուլում 19200 տպանիշ:  
Առորագրված է տպիլու 14 դեկտեմբերի 1942 թ.:  
ՀԱՅՈՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԻԾ ՔԵՐՔԵՐԻ և ԱՄՍՈԳՔԻ-  
ՔԻ ՄԱՊԱՐԱՆ, ԵՐԵՎԱՆ,


ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0042065

(154)

ԳԻՒԾ 1 Ռ.



ՀՀ -

Արքան